ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (Terms of Reference)

Հայաստանի Հանրապետության սպանդանոցային համակարգի համապարփակ ուսումնասիրության և վերլուծության իրականացում Կենդանիների համարակալման և հաշվառման (ԿՀՀ) համակարգի արդյունավետության բարձրացման և կենդանիների հետագծելիության ուժեղացման նպատակով

Ուսումնասիրությունն իրականացվում է **«ՀՀ-ում կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի կատարելագործում՝ հանուն կայուն գյուղատնտեսության»** ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը ֆինանսավորվում է **Ավստրիական զարգացման գործակալության (ADA)** կողմից և իրականացվում է **CARD հիմնադրամի** կողմից՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարության** հետ սերտ համագործակցությամբ:

1. <u>Ներածություն</u>

Սպանդանոցները հանդիսանում են գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման (ԿՀՀ) համակարգի արդյունավետ գործարկման, կենդանիների շարժի վերահսկման և հետագծելիության ապահովման առանցքային բաղադրիչներից: Դրանք կարևոր դեր են կատարում սննդամթերքի անվտանգության ապահովման, անասնաբուժական ռիսկերի կանխարգելման և կառավարման, ինչպես նաև կենդանիների շարժի և սպանդի նկատմամբ պետական վերահսկողության արդյունավետ իրականացման գործում:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գործող ԿՀՀ ծրագրի Աշխատանքային խմբի (ԱԽ) շրջանակներում իրականացված քննարկումների արդյունքները և ոլորտի պատասխանատու պետական ու մասնավոր կառույցների կողմից բազմիցս բարձրաձայնված խնդիրներն ու մարտահրավերները, նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության սպանդանոցային համակարգի գործունեության համապարփակ ուսումնասիրություն և վերլուծություն:

Ուսումնասիրության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետության սպանդանոցային համակարգի ներկա վիճակը, բացահայտել սպանդանոցների թերի հզորությամբ գործելու կամ չգործելու հիմնական պատճառները, վերլուծել դրանց արդյունավետ գործունեությանը խոչընդոտող իրավական, ինստիտուցիոնալ, տնտեսական, ֆինանսական, տեխնիկական և սոցիալական գործոնները, ինչպես նաև մշակել հիմնավորված, գործնական և իրագործելի առաջարկություններ՝ ուղղված սպանդանոցային համակարգի արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ պետական աջակցության, խրախուսման, կարգավորման և վերահսկողության մեխանիզմների ներառումը:

Մասնավորապես նախատեսվում է ուսումնասիրել՝

1. Ինչու՞ են մի շարք սպանդանոցներ գործում մասնակի ծանրաբեռնվածությամբ կամ ընդհանրապես չեն գործում,

2. Ի՞նչ գործոններով է պայմանավորված ֆերմերների կողմից կենդանիներին սպանդանոց չտանելը և բակային մորթի շարունակական իրականացումը,
3. Որքանո՞վ են սպանդանոցների ծառայությունները հասանելի, տնտեսապես շահավետ և կիրառելի տարբեր համայնքների և տնտեսությունների համար,
4. Ի՞նչ դեր ունեն կենդանի կենդանիների և մսի վաճառքով զբաղվող միջնորդները («ղասաբներ») կենդանիների չվերահսկվող շարժի և չհաշվառված սպանդի գործընթացներում,
5. Ի՞նչ խնդիրներ կան կենդանիների շարժի գրանցման, ԿՀՀ էլեկտրոնային ԱՆԻ ՊԱՍ համակարգում տվյալների մուտքագրման և սպանդից հետո կենդանիների հաշվառումից դուրս գրման գործընթացներում,
6. Որքանո՞վ են արդյունավետ պետական վերահսկողության, տեսչական և իրավական կարգավորման գործող մեխանիզմները, և այլն

Ուսումնասիրության շրջանակում անհրաժեշտ է իրականացնել ոլորտի բազմակողմանի գնահատում՝ ներառյալ իրավական, ինստիտուցիոնալ, ֆինանսական, տնտեսական և գործառնական վերլուծություններ:
Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի նաև շահառուների վարքագծային և սոցիալ-տնտեսական գործոններին, որոնք ազդում են սպանդանոցային համակարգի կիրառելիության և արդյունավետության վրա:

Արդյունքում նախատեսվում է մշակել համապարփակ վերլուծական փաստաթուղթ, որը կներառի՝

1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը և նախապատմությունը,
2. Հիմնական շահառուների և դերակատարների քարտեզագրումը,
3. ՀՀ սպանդանոցային համակարգի քարտեզագրումը
4. գնահատել այն համայնքները, որտեղ աշխարհագրական, տրանսպորտային կամ այլ օբյեկտիվ սահմանափակումների պատճառով սպանդանոցային ծառայությունները բավարար չափով հասանելի չեն, և հիմնավորել նոր սպանդանոցների կամ սպանդանոցային կետերի ստեղծման անհրաժեշտությունը:
5. Առկա ենթակառուցվածքային, իրավական, ինստիտուցիոնալ, տնտեսական, ֆինանսական, վարքագծային և սոցիալական խնդիրների ու սահմանափակումների վերլուծությունը,
6. Իրավական և ինստիտուցիոնալ դաշտի գնահատումը,
7. Սպանդանոցային համակարգի ֆինանսական և տնտեսական վերլուծությունը,
8. Կենդանիների համարակալման և հաշվառման (ԿՀՀ) համակարգի և սպանդանոցների միջև փոխգործակցության արդյունավետության գնահատումը,
9. Համակարգի զարգացման, գործառնական արդյունավետության բարձրացման և գործնական լուծումների վերաբերյալ առաջարկությունները,
10. Քաղաքականության, օրենսդրական դաշտի և կառավարման մեխանիզմների բարեփոխման առաջարկությունները, ներառյալ պետական աջակցության, խրախուսման և վերահսկողության առավել արդյունավետ գործիքների մշակումը, ինչպես նաև պետական աջակցության միջոցառումների ծախսա-արդյունավետության, տնտեսական ազդեցության և պետության համար ակնկալվող վերադարձի (return on investment) գնահատումը:

Ուսումնասիրության արդյունքները նախատեսվում է օգտագործել ԿՀՀ համակարգի արդյունավետությունն ու կայունությունն ապահովելու, ոլորտի հետագա բարեփոխումների, պետական քաղաքականության կատարելագործման, ինչպես նաև կենդանիների հետագծելիության ուժեղացման նպատակով:

2. Նախապատմություն

Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման (ԿՀՀ) համակարգի ներդրումն ու արդյունավետ գործարկումը միջազգային փորձի համաձայն իրականացվում է երեք հիմնական փուլերով՝

- նախապատրաստական,
- իրականացման,
- շարունակականության և կայունության ապահովման

Հայաստանի Հանրապետությունում ԿՀՀ ծրագիրը նույնպես իրականացվում է նշված փուլային մոտեցման համաձայն: Այն հանդիսանում է համապետական նախաձեռնություն, որն իրականացվում և ֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից՝ Ավստրիական զարգացման գործակալության (ADA) տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ, CARD հիմնադրամի միջոցով: Ներկայումս ծրագիրը գտնվում է իր երրորդ՝ շարունակականության և կայունության ապահովման փուլում:

Ծրագրի մշակման, ներդրման և հետագա կատարելագործման բոլոր փուլերում մասնագիտական խորհրդատվություն է տրամադրել Ավստրիայի Agrarmarkt Austria (AMA) պետական կազմակերպությունը, որը պատասխանատու է Ավստրիայում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի կառավարման և զարգացման համար: Միջազգային գործընկերների աջակցությամբ իրականացված աշխատանքները նպաստել են ՀՀ-ում ԿՀՀ համակարգի ներդրմանը, դրա գործառնական կարողությունների զարգացմանը և համակարգի շարունակական բարելավմանը:

ԿՀՀ ծրագրի մշակման, ներդրման և զարգացման փուլերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է **Հավելված 1-ում**:

3. Առկա խնդիրներն ու ուսումնասիրության անհրաժեշտությունը

Չնայած վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում պետական աջակցության ծրագրերի և մասնավոր ներդրումների արդյունքում կառուցվել և լիցենզավորվել են բազմաթիվ սպանդանոցներ, դրանց զգալի մասը գործում է թերի հզորությամբ կամ ընդհանրապես չի գործում: Միաժամանակ, բազմաթիվ ֆերմերներ շարունակում են կենդանիների սպանդն իրականացնել սպանդանոցներից դուրս՝ հրաժարվելով լիցենզավորված սպանդանոցների ծառայություններից, իսկ անասնաշուկաների մասնակիցները, կենդանի կենդանիների առքուվաճառքով և մսի իրացմամբ զբաղվող տնտեսավարողները հաճախ չեն համագործակցում սպանդանոցների հետ կամ սահմանափակ են ներգրավված դրանց գործունեության մեջ:

Արդյունքում շարունակում են պահպանվել բակային մորթի, կենդանիների չհաշվառված շարժի և ոչ պաշտոնական մսաշրջանառության դեպքերը, որոնց ձևավորման և պահպանման գործում էական դեր ունեն նաև կենդանի կենդանիների և մսի առքուվաճառքով զբաղվող միջնորդները («ղասաբներ») և շուկայի այլ ոչ ֆորմալ մասնակիցները:

Նկարագրված իրավիճակը բացասաբար է անդրադառնում ոչ միայն սպանդանոցային համակարգի արդյունավետ գործունեության, այլև գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման (ԿՀՀ) համակարգի լիարժեք և կայուն գործարկման վրա՝ սահմանափակելով կենդանիների շարժի արդյունավետ վերահսկողությունը և հետագծելիության ապահովումը:

Մասնավորապես, այն բացասական ազդեցություն է ունենում՝

- կենդանիների ամբողջական հետագծելիության ապահովման,
- կենդանիների շարժի և սպանդի արդյունավետ վերահսկողության,
- ԿՀՀ համակարգում տվյալների ամբողջականության և ճշգրտության ապահովման,
- Սննդամթերքի անվտանգության ապահովման,
- Կենդանիների հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և վերահսկման,
- Մսի շուկայի թափանցիկության և արդար մրցակցային միջավայրի ձևավորման,
- Ինչպես նաև ոլորտում պետական վերահսկողության և քաղաքականության իրականացման արդյունավետության վրա:

<u>Հիմնական գործառույթները</u>

Խորհրդատուն/խորհրդատվական կազմակերպությունը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

<u>3. 1 Իրավական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրություն</u>

- **Ուսումնասիրել սպանդանոցների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ենթաօրենսդրական ակտերը և տեխնիկական պահանջները,**
- **Գնահատել գործող կարգավորումների կիրառելիությունն ու արդյունավետությունը,**
  Ուսումնասիրել, թե որքանով են գործող իրավական և տեխնիկական պահանջները կիրառվում գործնականում, որքանով են դրանք իրատեսական և հասանելի տարբեր չափերի տնտեսավարողների համար, ինչպես նաև գնահատել դրանց ազդեցությունը սպանդանոցների գործունեության, կենդանիների հետագծելիության և սննդամթերքի անվտանգության վրա:
- **Վերլուծել պետական վերահսկողության և տեսչական մեխանիզմների արդյունավետությունը,**

Գնահատել ոլորտում վերահսկողություն իրականացնող պետական մարմինների գործառույթները, վերահսկողական գործիքակազմը, ստուգումների արդյունավետությունը, խախտումների արձանագրման և պատասխանատվության կիրառման մեխանիզմները, ինչպես նաև բակային մորթի և չգրանցված սպանդի նկատմամբ վերահսկողության մակարդակը:

- **Մշակել առաջարկություններ՝ ուղղված սպանդանոցների և ԿՀՀ համակարգի արդյունավետ կիրառման խրախուսմանն ու խթանմանը, ինչպես նաև համակարգի պահանջների ոչ արդյունավետ կամ ոչ լիարժեք կիրառման դեպքերում համապատասխան վերահսկողական և պատժամիջոցների մեխանիզմների ներդրմանը:**

  Առաջարկությունները կարող են ներառել՝

  - ֆերմերների և տնտեսավարողների համար ֆինանսական կամ վարչարարական խրախուսման գործիքներ,
  - Սպանդանոցների ծառայություններից օգտվելու խթանման մեխանիզմներ,
  - Կենդանիների շարժի և սպանդի պարտադիր գրանցման արդյունավետ մեխանիզմներ,
  - Բակային մորթի և չհաշվառված սպանդի սահմանափակման միջոցառումներ,
  - Վերահսկողության և պատասխանատվության կիրառման մեխանիզմների կատարելագործում,
  - Տուգանքների, սահմանափակումների կամ այլ վարչական միջոցների կիրառման հնարավորություններ՝ գործող պահանջների խախտման դեպքերում:
  - ինչպես նաև առաջարկվող խրախուսման, պետական աջակցության միջոցառումների ծախսա-արդյունավետության, տնտեսական ազդեցության և պետության համար ակնկալվող վերադարձի (return on investment) գնահատում:

<u>3. 2 Սպանդանոցների քարտեզագրում և իրավիճակի գնահատում</u>

Խորհրդատուն/խորհրդատվական կազմակերպությունը պետք է իրականացնի ՀՀ սպանդանոցային համակարգի համապարփակ քարտեզագրում:

Ուսումնասիրության շրջանակում անհրաժեշտ է՝

- **Կազմել ՀՀ-ում գործող, ժամանակավորապես չգործող և փակված սպանդանոցների ամբողջական ցանկը**
  Իրականացնել սպանդանոցների դասակարգում ըստ գործունեության կարգավիճակի, աշխարհագրական տեղակայման, գործունեության ծավալի և սպասարկման տարածքի: Հավաքագրել և վերլուծել տվյալներ սպանդանոցների վերաբերյալ՝

- տեղակայման և հասանելիության,
- սեփականության ձևի,
- արտադրական և սպանդային հզորությունների,
- տեխնիկական և ենթակառուցվածքային վիճակի,
- սարքավորումների և սանիտարահիգիենիկ պայմանների,
- աշխատուժի և մասնագիտական կարողությունների,
- սպասարկվող կենդանատեսակների,
- մատուցվող ծառայությունների ծավալի և տեսակների,
- կենդանիների տեղափոխման, ընդունման, պահպանման և սպանդի գործընթացների,
- մսեղիքի պահպանման, տեղափոխման և իրացման մեխանիզմների վերաբերյալ:

- **Գնահատել կենդանիների տեղափոխման և լոգիստիկ հնարավորությունները**
  Ուսումնասիրել գնված և սպանդի ենթակա կենդանիների տեղափոխման կազմակերպման հնարավորությունները, կենդանիների տեղափոխման ծախսերը, տրանսպորտային միջոցների առկայությունը, ճանապարհային հասանելիությունը և լոգիստիկ սահմանափակումները: Գնահատել, թե որքանով են սպանդանոցները հասանելի տարբեր մարզերի, համայնքների և հեռավոր բնակավայրերի ֆերմերների համար:

- **Վերլուծել սպանդանոց–անասնատեր փոխհարաբերությունները**
  Գնահատել սպանդանոցների և անասնատերերի միջև համագործակցության ձևերը, վստահության մակարդակը, ծառայությունների կազմակերպման մեխանիզմները, ինչպես նաև սպանդանոցի սեփականատերերի և ֆերմերների հիմնական դժգոհությունները և ակնկալիքները:

- **Գնահատել անասնատերերի իրազեկվածության մակարդակը**
  Ուսումնասիրել, թե որքանով են անասնատերերը տեղեկացված իրենց համայնքներին մոտ գտնվող սպանդանոցների, դրանց մատուցած ծառայությունների, ծառայությունների արժեքի, և ԿՀՀ համակարգի հետ փոխկապակցվածության վերաբերյալ: Վերլուծել սպանդանոցների ծառայությունների գնային քաղաքականությունը և գնահատել՝ արդյոք ծառայությունների արժեքը տնտեսապես ընդունելի և հասանելի է ֆերմերների, փոքր, միջին և խոշոր տնտեսությունների, կենդանի կենդանի գնող և այնուհետև այն որպես միս վաճառողների, մսավաճառների և շուկայի այլ մասնակիցների համար:

- **Ուսումնասիրել սպանդանոցների կողմից կենդանիների ձեռքբերման, տեղափոխման և ժամանակավոր պահպանման հնարավորությունները**
  Գնահատել, սպանդանոցների հնարավորությունները գնել կենդանիներ անմիջապես անասնաֆերմաներից, կազմակերպել կենդանիների տեղափոխությունը դեպի սպանդանոց, ինչպես նաև ուսումնասիրել

սպանդանոցներին կից ֆերմաների, բտման հարթակների և ժամանակավոր պահման տարածքների առկայությունը և գործունակությունը:

Վերլուծել, թե արդյոք սպանդանոցներն ունեն հնարավորություն գնված կենդանիներին անհրաժեշտության դեպքում ժամանակավորապես պահել, բտել և սպանդի ենթարկել փուլային եղանակով՝ շուկայի պահանջարկին համապատասխան:

- **Գնահատել սպանդանոցների համապատասխանությունը սանիտարահիգիենիկ և անասնաբուժական պահանջներին**
  Վերլուծել սպանդանոցների համապատասխանությունը գործող նորմերին և չափանիշներին՝ կապված կենսանվտանգության, սանիտարահիգիենիկ պայմանների, թափոնների կառավարման, անասնաբուժական վերահսկողության և մսի անվտանգության հետ:
- **Վերլուծել սպանդանոցների կապը կենդանիների համարակալման և հաշվառման գործընթացների հետ**
  Գնահատել սպանդանոցների դերակատարությունը կենդանիների շարժի գրանցման, կենդանիների հաշվառումից դուրսգրման, «ԱՆԻ ՊԱՍ» համակարգի հետ տվյալների փոխանակման և կենդանիների հետագծելիության ապահովման գործընթացներում:

Ուսումնասիրության արդյունքում պետք է ձևավորվի ՀՀ սպանդանոցային համակարգի ներկա իրավիճակի ամբողջական պատկերը՝ ներառյալ համակարգի ուժեղ և թույլ կողմերը, տարածքային և գործառնական բացերը, ինչպես նաև զարգացման և բարելավման հնարավոր ուղղությունները ներառյալ խրախուսման և պատժամիջոցների առաջարկությունները:

3.3. Տնտեսական և ֆինանսական վերլուծություն

- Գնահատել սպանդանոցների տնտեսական կենսունակությունը,
- Վերլուծել եկամուտների և ծախսերի աղբյուրները, կառուցվածքը,
- Ուսումնասիրել սպանդանոցի մատուցված ծառայությունների գնային քաղաքականությունը
- Բացահայտել ներդրումային, հարկային, վարկային կամ այլ ֆինանսական հնարավորություններն ու սահմանափակումները,
- Գնահատել պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը

3. 4 Կադրային խնդիրներ

Գնահատել ոլորտում առկա մարդկային ռեսուրսների և մասնագիտական կարողությունների վիճակը՝ ներառյալ որակավորված աշխատուժի, անասնաբուժական մասնագետների, սպանդանոցների տեխնիկական անձնակազմի և կառավարչական կարողությունների բավարարությունը, ինչպես նաև վերապատրաստումների և կարողությունների զարգացման անհրաժեշտությունը: Ուսումնասիրության շրջանակում անհրաժեշտ է նաև գնահատել սպանդանոցային համակարգի լիարժեք և

կայուն գործարկման, ինչպես նաև առաջարկվող բարեփոխումների և զարգացման միջոցառումների իրականացման համար պահանջվող մարդկային, տեխնիկական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ ռեսուրսները, վերլուծել դրանց առկայությունը և մշակել առաջարկություններ առկա կարողությունների հզորացման և անհրաժեշտ ռեսուրսների ապահովման ուղղությամբ:

3. 5 Սոցիալական և մշակութային գործոններ

Ուսումնասիրել ֆերմերների և սպառողների վարքագծային առանձնահատկությունները, ավանդական բակային մորթի մշակույթը, սպառողների իրազեկվածության և վստահության մակարդակը սպանդանոցների նկատմամբ և սոցիալական այլ գործոններ, որոնք կարող են ազդել համակարգի կիրառման և գործարկման վրա:

4. Շահառուների շրջանակը

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
2. ՀՀ էն Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ
3. ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
4. CARD հիմնադրամ
5. ԱՆԻ ՊԱՍ էլեկտրոնային համակարգի ճարտարագետ
6. ԱՆԻ ՊԱՍ էլեկտրոնային համակարգի սպասարկող անձնակազմ
7. Սպանդանոցների սեփականատերեր և կառավարիչներ,
8. Անասնաբույժեր
9. ֆերմերներ և անասնապահներ,
10. Կենդանի կենդանի վաճառողներ և մսավաճառներ («ղասաբներ»)
11. Վերամշակողներ,
12. Տեղական ինքնակառավարման մարմիններ,
13. այլ համապատասխան կառույցներ,

Հանդիպումների, այցերի, ֆոկուս խմբերի և այլ մեթոդների հիման վրա վերհանել հիմնական խնդիրները, մոտեցումները և առաջարկությունները:

6. Առաջարկությունների մշակում

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա խորհրդատուն/խորհրդատվական կազմակերպությունը պետք է մշակի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջարկություններ՝ ուղղված ՀՀ սպանդանոցային համակարգի արդյունավետության բարձրացմանը, ԿՀՀ համակարգի կայուն գործունեության ապահովմանը, կենդանիների շարժի վերահսկողության ուժեղացմանը և կենդանիների ամբողջական հետագծելիության ապահովմանը:

Առաջարկությունները պետք է լինեն գործնական, իրատեսական և փուլային՝ հիմնված իրականացված ուսումնասիրության արդյունքների, շահառուների կարծիքների, ոլորտի առկա խնդիրների և միջազգային փորձի վրա: Առաջարկվող խրախուսման և պետական աջակցության միջոցառումները պետք է ներառեն ծախսա-

արդյունավետության, տնտեսական ազդեցության, ֆինանսական կայունության և պետության համար ներդրումների վերադարձի (Return on Investment – ROI) գնահատում՝ հիմնավորված համապատասխան քանակական և որակական վերլուծություններով:

Մասնավորապես անհրաժեշտ է մշակել առաջարկություններ՝ ուղղված՝

- **Սպանդանոցային համակարգի արդյունավետության բարձրացմանը և լիարժեք գործարկմանն ուղղված միջոցառումներ**
  Ներկայացնել առաջարկություններ սպանդանոցների կառավարման, տնտեսական արդյունավետության, ծառայությունների հասանելիության, տեխնիկական կարողությունների և գործառնական արդյունավետության բարելավման և լիարժեք գործարկման վերաբերյալ:
- **ԿՀՀ համակարգի ուժեղացմանը**
  Մշակել առաջարկություններ՝ ուղղված կենդանիների սպանդի բացառապես լիցենզավորված սպանդանոցներում իրականացման ապահովմանը, կենդանիների հաշվառումից դուրսգրման գործընթացի լիարժեք վերահսկմանը և «ԱՆԻ ՊԱՍ» համակարգում կենդանիների շարժի ու սպանդի ամբողջական արտացոլմանը:
- **Կենդանիների շարժի վերահսկողության և հետագծելիության բարելավմանը**
  Առաջարկել մեխանիզմներ կենդանիների առքուվաճառքի, տեղափոխության, սպանդի և շուկայավարման գործընթացների վերահսկողության ուժեղացման, ինչպես նաև կենդանիների ամբողջական հետագծելիության ապահովման նպատակով:
- **Սպանդանոցների ներգրավվածության խթանմանը**
  Մշակել առաջարկություններ, որոնք կնպաստեն սպանդանոցների ավելի ակտիվ ներգրավվածությանը կենդանիների ձեռքբերման և մատակարարման շղթայում, մասնավորապես՝ կենդանիների գնումն անմիջապես անասնաֆերմաներից, դրանց տեղափոխման կազմակերպումը և անհրաժեշտության դեպքում կենդանիների ժամանակավոր պահման ու բտման հնարավորությունների զարգացման ուղղությամբ:
- **Պետական աջակցության ծրագրերի կատարելագործմանը**
  Առաջարկել պետական աջակցության, սուբսիդավորման և խրախուսման գործիքներ՝ ուղղված ֆերմերներին կենդանիներին սպանդանոց տեղափոխելու կամ սպանդանոցներին վաճառելու խթանմանը, ինչպես նաև կենդանիների սպանդը բացառապես լիցենզավորված սպանդանոցներում իրականացնելու պայմանների ձևավորմանը:
- **Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին**
  Ներկայացնել առաջարկություններ ոլորտը կարգավորող իրավական դաշտի, վերահսկողական մեխանիզմների, պատասխանատվության համակարգի և պետական կառավարման գործընթացների կատարելագործման վերաբերյալ:
- **Ֆերմերների և շահառուների իրազեկվածության բարձրացմանը**
  Մշակել իրազեկման և վարքագծային փոփոխություններին ուղղված միջոցառումների առաջարկություններ՝ նպաստելու սպանդանոցային մորթի, կենդանիների հաշվառման և հետագծելիության համակարգերի նկատմամբ վստահության և կիրառման մակարդակի բարձրացմանը:

Ուսումնասիրությունը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ ներառելով տարբեր տեսակի և չափերի սպանդանոցներ:

1. **<u>Մեթոդաբանություն</u>**

Ուսումնասիրությունը պետք է ունենա թե՛ քանակական թե՛ որակական գնահատականներ, հիմնված առաջնային տվյալների վրա

Խորհրդատուն/խորհրդատվական կազմակերպությունը պետք է ներկայացնի մանրամասն մեթոդաբանություն, որը պետք է ներառի՝

- Օրենսդրական փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Առաջնային տվյալների հավաքագրում ինչպես սպանդանոցներից այնպես էլ ֆերմերային տնտեսություններից և այլ շահառուներից (միջնորդներ, վաճառքի կետեր, կառավարություն, ՍԱՏմ և այլն)
- դաշտային այցեր,
- հարցաթերթային հարցումներ,
- հարցազրույցներ,
- ֆոկուս խմբեր,
- վիճակագրական և տնտեսական վերլուծություն,
- շահառուների խորհրդակցություններ,
- միջազգային փորձի ուսումնասիրություն

8. <u>Ակնկալվող արդյունքները</u>

Ուսումնասիրության արդյունքում ակնկալվում է՝

- ՀՀ սպանդանոցների ներկա իրավիճակի համապարփակ գնահատում, առկա խնդիրների գնահատում, ոլորտի տնտեսական, ֆինանսական և կառավարչական խնդիրների վերլուծություն,
- Սպանդանոցների քարտեզագրում ներառելով նաև համայնքներ որտեղ կարիք կա սպանդանոցային կետեր հիմնելու
- Սպանդանոցների Չգործելու կամ թերի գործելու հիմնական պատճառների հստակ վերհանում,
- Ֆերմերների սպանդանոցներ կենդանիներին չտանելու պատճառներ
- Ղասաբների սպանդանոցի հետ չաշխատելու պատչառներ
- ԿՀՀ համակարգի հետ առկա խնդիրների գնահատում, ոլորտի տնտեսական, ֆինանսական և կառավարչական խնդիրների վերլուծություն,
- Գործնական և իրագործելի խնդիրների լուծումների և առաջարկությունների փաթեթ, հիմնավորված դրանց ծախսա-արդյունավետության, տնտեսական ազդեցության, ֆինանսական կայունության և պետության համար ներդրումների վերադարձի (Return on Investment – ROI) գնահատմամբ,
-

- Քաղաքականության և օրենսդրական բարեփոխումների առաջարկներ,
- Խրախուսման և պատժամիջոցների կիրառման առաջարկներ

9. Ակնկալվող արդյունքների/փաստաթղթերի ցանկ

Խորհրդատուն/խորհրդատվական կազմակերպությունը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը/արդյունքները՝

Փաստաթուղթ / Արդյունք	**Կատարման ժամկետ**
Մեկնարկային փուլ	
Պայմանագրի կնքում	5 աշխատանքային օր
Մեկնարկային հաշվետվության (Inception Report) պատրաստում և ներկայացում	10 աշխատանքային օր
Դաշտային աշխատանքների փուլ	
Տվյալների հավաքագրման գործիքների, հարցաթերթերի և ուսումնասիրության մեթոդաբանության մշակում	15 աշխատանքային օր
Դաշտային աշխատանքների իրականացում, տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն	25 աշխատանքային օր
Նախնական արդյունքների, բացահայտված փաստերի և վերլուծությունների ներկայացում, շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների և առաջարկությունների հավաքագրում	10 աշխատանքային օր
Հաշվետվությունների պատրաստման փուլ	
Վերջնական հաշվետվության պատրաստում և ներկայացում (հայերեն և անգլերեն լեզուներով)	15 աշխատանքային օր
Ներկայացման սահիկաշարի (Presentation Slides) պատրաստում (հայերեն և անգլերեն լեզուներով)	5 աշխատանքային օր

Առաջադրանքի իրականացման ընդհանուր տևողությունը նախատեսվում է 85 աշխատանքային օր՝ պայմանագրի ստորագրման օրվանից:

10. Խորհրդատուի/խորհրդատվական կազմակերպության որակավորումը

Խորհրդատուն/խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

1. ներգրավված անձնակազմի և փորձագետների CV-ները
2. նմանատիպ ծրագրերի իրականացման պատմությունը,
3. փորձ գնահատումների, հետազոտությունների կամ քաղաքականությունների մշակման ուղղությամբ,
4. ԿՀՀ համակարգերի, սպանդանոցների կառավարման և անասնաբուժական վերահսկողության ոլորտում գիտելիքը կդիտարկվի որպես առավելություն

5. տվյալների հավաքագրման և վերլուծության փորձ,
6. հայերեն և անգլերեն լեզվի գերազանց իմացություն:

11. Հաշվետվությունների ներկայացում և վերահսկողություն

Խորհրդատուն աշխատանքները կիրականացնի ծրագրի համակարգման թիմի և համապատասխան պետական մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

Բոլոր հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, իսկ վերջնականը և սահիկաշարը՝ նաև անգլերեն:

12. Գաղտնիություն և տվյալների սեփականություն

Ուսումնասիրության ընթացքում հավաքագրված բոլոր տվյալները և մշակված նյութերը հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը և չեն կարող փոխանցվել երրորդ կողմերին:

13. Գնահատման չափանիշներ (առաջարկների ընտրության դեպքում)

Առաջարկները գնահատվելու են ըստ հետևյալ չափանիշների՝

- թիմի փորձի և որակավորման համապատասխանելիություն
- տեխնիկական առաջարկի համապատասխանելիություն,
- նմանատիպ աշխատանքների փորձի առկայություն,
- ֆինանսական առաջարկ,

Հավելված 1.

<u>Նախապատրաստական փուլ</u>

Նախապատրաստական փուլում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առընթեր ձևավորվել է ԿՀՀ ծրագրի աշխատանքային խումբը (ԱԽ), որը ղեկավարում է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը: Աշխատանքային խմբում ընդգրկված են ոլորտի հիմնական շահագրգիռ կողմերը՝ պետական կառույցներ, ծրագրի իրականացնող կազմակերպություններ և մասնագիտական կառույցներ: Անհրաժեշտության դեպքում խմբի աշխատանքներին ներգրավվում են նաև փորձագետներ և միջազգային գործընկերներ:

Այս փուլում ԱԽ կողմից մշակվել է խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման համապարփակ ծրագիր, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի N 954-Լ որոշմամբ (հետագայում ուժը կորցրած և փոխարինված՝ 30.05.2024 թ. N 818-Լ որոշմամբ՝ «ՀՀ գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիր»): Ծրագրով սահմանվել են համակարգի ներդրման հիմնական ուղղությունները, կառավարման մեխանիզմները, պատասխանատու մարմինների գործառույթները, ինչպես նաև իրականացման փուլերն ու ժամանակացույցը:

Նախապատրաստական փուլում իրականացված աշխատանքների շրջանակում մշակվել են նաև 12 ԿՀՀ ծրագրի Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգեր (ԳՍԸ)՝ տարբեր գործընթացների համար, օրինակ՝ կենդանու ծին, սպանդ, անկում, ականջապիտակների բաշխում և այլն:

Նախապատրաստական փուլում տեղական և միջազգային փորձագետների կողմից իրականացվել է «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունների և ԿՀՀ ծրագրի պահանջներին համապատասխանության գնահատում: Գնահատման արդյունքում տրվել է դրական եզրակացություն առ այն, որ համակարգը կարող է ծառայել կենդանիների համարակալման և հաշվառման ծրագրի իրականացման նպատակներին:

Այնուհետև փորձնական տնտեսություններում իրականացվել է կենդանիների համարակալում և հաշվառում, ինչպես նաև գործնական պայմաններում փորձարկվել է համակարգի աշխատանքը, տվյալների մուտքագրման, պահպանման և հետագծելիության մեխանիզմների արդյունավետությունը: Փորձնական փուլը հնարավորություն է տվել գնահատելու համակարգի կիրառելիությունը դաշտային պայմաններում և նախապատրաստելու դրա լայնածավալ ներդրումը հանրապետությունում:

Նախապատրաստական աշխատանքների կարևոր բաղադրիչներից է եղել իրազեկման և կարողությունների զարգացման լայնածավալ գործընթացը: ՀՀ բոլոր 10 մարզերում մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ իրականացվել են իրազեկման հանդիպումներ մարզպետների, համայնքապետերի, ֆերմերների, անասնաբույժների, սպանդանոցների սեփականատերերի և այլ շահառուների հետ: Տպագրվել և տարածվել են տեղեկատվական նյութեր՝ պաստառներ, բուկլետներ և ուսուցողական ձեռնարկներ:

Միաժամանակ մշակվել է տեխնիկական առաջադրանք՝ ականջապիտակների և համապատասխան դակիչների ձեռքբերման համար, և հայտարարվել է պետական գնումների գործընթաց: Գնումների արդյունքում ձեռք է բերվել շուրջ 800,000 զույգ ականջապիտակ, ինչպես նաև տպագրվել են գրանցամատյաններ անասնաբույժների համար՝ նախնական դաշտային տվյալների հավաքագրման նպատակով:

Կազմվել են նաև ուսուցողական ծրագրեր ՀՀ բոլոր մարզերում՝ անասնաբույժների և էլեկտրոնային համակարգերում տվյալների մուտքագրում իրականացնող անձանց համար, և իրականացվել են ինտենսիվ դասընթացներ՝ համակարգչային հմտությունների, «ԱՆԻ ՊԱՍ» (ANI PAS) տեղեկատվական համակարգում տվյալների մուտքագրման, կենդանիների համարակալման տեխնիկայի և դաշտային աշխատանքի կազմակերպման վերաբերյալ:

<u>Իրականացման փուլ</u>

ԿՀՀ համակարգի իրականացման փուլը մեկնարկել է 2022 թվականի նոյեմբերին՝ խոշոր եղջերավոր կենդանիների համատարած համարակալմամբ և հաշվառմամբ: Գործընթացը սկզբում մեկնարկել է Արարատի մարզից, այնուհետև փուլային եղանակով տարածվել է հանրապետության մյուս մարզերում:

Դաշտային աշխատանքների շրջանակում անասնաբույժ մասնագետները համայնք առ համայնք և տնտեսություն առ տնտեսություն իրականացրել են կենդանիների համարակալում և հաշվառում: Տվյալները հավաքագրվել են երեք մակարդակով՝

- սեփականատիրոջ,
- տնտեսության,
- կենդանու վերաբերյալ:

Սկզբնական փուլում տվյալները գրանցվել են թղթային գրանցամատյաններում, այնուհետև մուտքագրվել են «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային տվյալների բազա:

2025 թվականից ՀՀ կառավարությունը, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, մեկնարկել է նաև մանր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը: Մանր եղջերավոր կենդանիների դեպքում կենդանիների շարժը և շրջանառությունը զգալիորեն ավելի ինտենսիվ են, ինչի պատճառով սպանդանոցային վերահսկողությունը դառնում է առավել կարևոր՝ տվյալների ճշգրտության և համակարգի արդյունավետության ապահովման տեսանկյունից:

<u>Շարունակականության և կայունության ապահովման փուլ</u>

Ներկայում ՀՀ-ում ԿՀՀ ծրագիրը գտնվում է շարունակականության և կայունության ապահովման փուլում: Այս փուլում առաջնային նպատակն է ապահովել համակարգի լիարժեք և կայուն գործարկումը և տվյալների շարունակական թարմացումը:

ԿՀՀ համակարգի արդյունավետ գործունեության համար առանցքային նշանակություն ունի կենդանիների շարժի և սպանդի լիարժեք վերահսկումն ու դրանց ամբողջական արտացոլումը «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային համակարգում: Համակարգը կարող է արդյունավետ և վստահելի գործել միայն այն դեպքում, երբ կենդանիների

առքուվաճառքը, տեղափոխությունները, հեռագնա արոտավայրեր տեղափոխումը, սեփականատիրոջ փոփոխությունը և այլ շարժերը պատշաճ կերպով գրանցվում են համակարգում, իսկ կենդանիների սպանդն իրականացվում է բացառապես լիցենզավորված սպանդանոցներում և կենդանու դուրս գրումը համակարգից իրականացվում է սպանդանոցի միջոցով: Այս մոտեցումը հանդիսանում է ԿՀՀ համակարգի առանցքային մեխանիզմներից մեկը, քանի որ ապահովում է կենդանիների կյանքի ամբողջական ցիկլի վերահսկումը՝ ծնից մինչև սպանդ:

Ներկայում ԿՀՀ և սպանդանոցների տեղեկատվական համակարգերը ինտեգրված են: Յուրաքանչյուր կենդանու սպանդի դեպքում նրա նույնականացման ականջապիտակի համարը ավտոմատ կերպով դուրս է գրվում «ԱՆԻ ՊԱՍ» համակարգից՝ ապահովելով տվյալների օպերատիվ թարմացում, կենդանիների շարժի վերահսկում և հետագծելիություն:

Ծրագիրը կառուցված է այնպես, որ կենդանիների վերաբերյալ տվյալները, ներառյալ նույնականացման ականջապիտակների համարները, համակարգ են մուտքագրվում անասնաբույժ մասնագետների կողմից, իսկ կենդանիների հաշվառումից դուրս գրումը կատարվում է սպանդանոցների միջոցով՝ սպանդի իրականացումից հետո:

Այս մեխանիզմը կարևոր նշանակություն ունի ԿՀՀ համակարգի կայունության, տվյալների ճշգրտության, ամբողջականության և կենդանիների շարժի վերահսկման ապահովման տեսանկյունից: Այն թույլ է տալիս նվազեցնել տվյալների կորուստը կամ խեղաթյուրումը, ինչպես նաև կանխել կենդանիների չհաշվառված շարժն ու ապօրինի սպանդը: